Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-576-02.05.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

<<ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ԵՎ ՉՎՆԱՍԱԶԵՐԾՎԱԾ ՏԱՐԱՆԵՐ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» 2012 թվականի փետրվարի 27-ի ՀՕ-30-Ն օրենքի (այսուհետ օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 1-ին կետում «շենքերն ու շինությունները» բառերից հետո լրացնել «համաձայն՝ «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրի (ԱԴՌ) դասակարգման» բառերը.

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 10-րդ, 11-րդ և 12-րդ կետեր.

<<10) ***մասնագիտական վերապատրաստման վկայական՝*** վտանգավոր բեռներ փոխադրելու պահանջների մասնագիտական ստուգման դրական արդյունքի հիման վրա վարորդներին և անվտանգության մասնագետներին տրվող համապատասխան նմուշի փաստաթուղթ.

11) ***մասնագիտական վերապատրաստում՝*** վտանգավոր բեռների փոխադրման պահանջների կազմակերպման, անվտանգ փոխադրումների իրականացման, վթարների հավանականությունը նվազեցնելու, ինչպես նաև վթարային արձագանքման վերաբերյալ «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրի (ԱԴՌ) պահանջներին համապատասխան ծրագրերով վարորդների և անվտանգության մասնագետների մասնագիտական ուսուցում, որն իրականացվելու է վտանգավոր բեռներ փոխադրելու մասնագիտական վերապատրաստման գործունեության իրականացման լիցենզավորված կազմակերպությունների կողմից.

12) հատուկ վտանգավոր բեռներ՝ վտանգավոր բեռներ, որոնք իրենց ֆիզիկո-քիմիական հատկություններով մարդկանց կյանքին ու առողջությանը պատճառող վնասի և շրջակա միջավայրի համար վտանգավորության բարձր աստիճան ունեն և ցանկացած տեսակի մեկուսացում են պահանջում:>>:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 3-րդ կետում <<փոխադրումների համար>> բառերը փոխարինել <<փոխադրումներին>> բառով.

2. 4-րդ կետում հանել <<և դրանց փոխադրման համար տրամադրվող թույլտվությունների ժամկետները>> բառերը.

3. ուժը կորցրած ճանաչել 5-րդ կետը.

4. 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-11-րդ կետեր.

«7) հաստատում է վտանգավոր բեռներ փոխադրելու մասնագիտական վերապատրաստման գործունեություն իրականացնելու լիցենզավորման կարգը.

8) հաստատում է վտանգավոր բեռներ փոխադրելու որակավորման քննություններ հանձնելու պահանջները, մասնագիտական վերապատրաստման վկայականի ձևը և տրման կարգը.

9) հաստատում է վտանգավոր բեռներ փոխադրելու մասնագիտական վերապատրաստմանը ներկայացվող պահանջները.

10) հաստատում է վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցի հաստատման վկայականի ձևը և տրման կարգը.

11) հաստատում է անվտանգության մասնագետի մասնագիտական վերապատրաստում վկայականի ձևը և տրման կարգը:»:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ և 9-րդ կետերով.

«8) կազմակերպում է վտանգավոր բեռներ փոխադրելու որակավորման քննություններ հանձնելու և վտանգավոր բեռներ փոխադրելու մասնագիտական վերապատրաստման վկայական տալու գործընթացը.

9) ապահովում է վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում միջպետական համագործակցությունը:»:

Հոդված 4. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում և 14-րդ հոդվածի վերնագրում ու ամբողջ տեքստում «վտանգավոր բեռներ» բառերը փոխարինել «հատուկ վտանգավոր բեռներ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 5. Օրենքի 14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մաս.

«3. Փոխադրողը պարտավոր է ապահովել հատուկ վտանգավոր բեռների փոխադրումն ուղեկցող անձնակազմի միջոցով:»:

Հոդված 6. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով

«5) պետք է անցնեն առանձին դասերի վտանգավոր բեռներ փոխադրելու մասնագիտական վերապատրաստում, հանձնեն որակավորման քննություն և դրա դրական արդյունքի հիման վրա ստանան վարորդի մասնագիտական վերապատրաստման վկայական:».

2. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ և 5-րդ մասեր.

«4. Վտանգավոր բեռներ փոխադրողը ապահովում է վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցի հաստատման վկայականի ստացումը:

5. Վտանգավոր բեռներ փոխադրողը պետք է ունենա «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրով (ԱԴՌ) նախատեսված պահանջներին համապատասխան վտանգավոր բեռների անվտանգ փոխադրման գործընթացը կազմակերպող անվտանգության մասնագետ, որը պետք է անցնի մասնագիտական վերապատրաստում, հանձնի որակավորման քննություն և դրա դրական արդյունքի հիման վրա ստանա մասնագիտական վերապատրաստման վկայական:»:

Հոդված 7. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում «իրավական ակտերի» բառերից հետո լրացնել «, «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրի (ԱԴՌ)» բառերը:

Հոդված 8. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

3. Վտանգավոր բեռների փոխադրումներ իրականացնող փոխադրողը պարտավոր է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում ապահովել անվտանգության մասնագետների առկայությունը և վերապատրաստումը, վարորդների մասնագիտական վերապատրաստումը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

<<ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ԵՎ ՉՎՆԱՍԱԶԵՐԾՎԱԾ ՏԱՐԱՆԵՐ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» 2012 թվականի փետրվարի 27-ի ՀՕ-30-Ն օրենքի (այսուհետ օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1.~~)~~ 1-ին կետում «շենքերն ու շինությունները» բառերից հետո լրացնել «համաձայն՝ <<Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին>> եվրոպական համաձայնագրի (ԱԴՌ) դասակարգման» բառերը.

2.~~)~~ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 10-րդ, 11-րդ և 12-րդ կետեր.

<<10) ***մասնագիտական վերապատրաստման վկայական՝*** վտանգավոր բեռներ փոխադրելու պահանջների մասնագիտական ստուգման դրական արդյունքի հիման վրա ~~տրված~~ վարորդներին և անվտանգության մասնագետներին տրվող համապատասխան նմուշի փաստաթուղթ~~.~~

11) ***մասնագիտական վերապատրաստում՝*** վտանգավոր բեռների փոխադրման պահանջների կազմակերպման, անվտանգ փոխադրումների իրականացման, վթարների հավանականությունը նվազեցնելու, ինչպես նաև վթարային արձագանքման վերաբերյալ Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին եվրոպական համաձայնագրի (ԱԴՌ) պահանջներին համապատասխան ծրագրերով վարորդների և անվտանգության մասնագետների մասնագիտական ուսուցում, որն իրականացվելու է վտանգավոր բեռներ փոխադրելու մասնագիտական վերապատրաստման գործունեության իրականացման լիցենզավորված կազմակերպությունների կողմից.

12) հատուկ վտանգավոր բեռներ՝ վտանգավոր բեռներ, որոնք իրենց ֆիզիկո-քիմիական հատկություններով շրջակա միջավայրի համար վտանգավորության բարձր աստիճան ունեն և ցանկացած տեսակի մեկուսացում են պահանջում:>>:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝

1.~~)~~ 3-րդ կետում <<փոխադրումների համար>> բառերը փոխարինել <<փոխադրումներին>> բառով.

2.~~)~~ 4-րդ կետում հանել <<և դրանց փոխադրման համար տրամադրվող թույլտվությունների ժամկետները>> բառերը.

3.~~)~~ ուժը կորցրած ճանաչել 5-րդ կետը.

4.) 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-11-րդ կետեր.

«7) սահմանում է հաստատում է վտանգավոր բեռներ փոխադրելու մասնագիտական վերապատրաստման գործունեություն իրականացնելու լիցենզավորման կարգը.

8) հաստատում է վտանգավոր բեռներ փոխադրելու որակավորման քննություններ հանձնելու պահանջները, մասնագիտական վերապատրաստման վկայականի ձևը և տրման կարգը.

9) հաստատում է վտանգավոր բեռներ փոխադրելու մասնագիտական վերապատրաստմանը ներկայացվող պահանջները.

10) հաստատում է վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցի հաստատման վկայականի ձևը և տրման կարգը.

11) հաստատում է անվտանգության մասնագետի մասնագիտական վերապատրաստում վկայականի ձևը և տրման կարգը:»:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ և 9-րդ կետերով.

«8) կազմակերպում է վտանգավոր բեռներ փոխադրելու որակավորման քննություններ հանձնելու և վտանգավոր բեռներ փոխադրելու մասնագիտական վերապատրաստման վկայական տալու գործընթացը.

9) ապահովում է վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում միջպետական համագործակցությունը:»:

~~**Հոդված 4.** Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«4) հատուկ վտանգավոր բեռի փոխադրման դեպքում փոխադրողի կողմից գրավոր դիմումի հիման վրա իրականացնում է դրա ուղեկցումը անվտանգ երթևեկությունն ապահովելու նպատակով.»:~~

Հոդված ~~5~~4. Օրենքի 13-րդ հոդվածի ~~1-ին~~ 2-րդ մասի 5-րդ կետում և 14-րդ հոդվածի վերնագրում ու ամբողջ տեքստում «վտանգավոր բեռներ» բառերը փոխարինել «հատուկ վտանգավոր բեռներ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 5. Օրենքի 14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մաս.

«3. Փոխադրողը պարտավոր է ապահովել հատուկ վտանգավոր բեռների փոխադրումն ուղեկցող անձնակազմի միջոցով:»:

Հոդված 6. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1.) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով

«5) պետք է անցնեն առանձին դասերի վտանգավոր բեռներ փոխադրելու մասնագիտական վերապատրաստում ~~և ունենան վերապատրաստմանը համապատասխան~~, հանձնեն որակավորման քննություն և դրա դրական արդյունքի հիման վրա ստանան վարորդի մասնագիտական վերապատրաստման վկայական:».

2.) Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ և 5-րդ մասեր.

«4. Վտանգավոր բեռներ փոխադրողը ապահովում է վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցի հաստատման վկայականի ստացումը:

5. Վտանգավոր բեռներ ~~փոխադրող կազմակերպությունը~~ փոխադրողը պետք է ունենա «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրով (ԱԴՌ) նախատեսված պահանջներին համապատասխան վտանգավոր բեռների անվտանգ փոխադրման գործընթացը կազմակերպող անվտանգության մասնագետ, որը պետք է անցնի մասնագիտական վերապատրաստում, հանձնի որակավորման քննություն և դրա դրական արդյունքի հիման վրա ստանա ~~և ունենա~~ մասնագիտական վերապատրաստման վկայական:»:

Հոդված 7. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում «իրավական ակտերի» բառերից հետո լրացնել «, «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրի (ԱԴՌ)» բառերը:

Հոդված 8. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ~~վեց ամսվա~~ ընթացքում:

3. Վտանգավոր բեռների փոխադրումներ իրականացնող փոխադրողը պարտավոր է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում ապահովել անվտանգության մասնագետների առկայությունը, ~~—~~ և վերապատրաստումը, վարորդների մասնագիտական վերապատրաստումը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ԵՒ ՉՎՆԱՍԱՋԵՐԾՎԱԾ ՏԱՐԱՆԵՐ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-576-02.05.2023-ՏՀ-011/1), «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-576[1] -02.05.2023-ՏՀ-011/1), «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-576[2] -02.05.2023-ՏՀ-011/1) ԵՒ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-576[3] -02.05.2023-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
	««ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ԵՒ ՉՎՆԱՍԱՋԵՐԾՎԱԾ ՏԱՐԱՆԵՐ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ (Կ-576-02.05.2023-ՏՀ-011/1				
1.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետ և 2-րդ կետ, 11-րդ ենթակետ	Եվրոպական համաձայնագրի վերնագիրն նշել չակերտների մեջ	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
2.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետի 10-րդ ենթակետում «տրված» բառը փոխարինել «վարորդներին և անվտանգության մասնագետներին տրվող համապատասխան նմուշի» բառերով, իսկ 11-րդ ենթակետում «համապատասխան ծրագրերով բառերից հետո լրացնել «վարորդների և անվտանգության մասնագետների» բառերը՝ հստակեցնելով համապատասխան սահմանումները:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
3.	*ՀՀ կառավարություն*	**Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետ**	12-րդ կետում «շրջակա միջավայրի» բառերից առաջ լրացնել «մարդկանց կյանքին ու առողջությանը պատճառող վնասի և» բառերը	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է

4.	*ՀՀ կառավարություն*	**Նախագծի** 2-րդ հոդվածի 4-րդ կետով լրացվող 7-րդ կետ	**Նախագծի** 2-րդ հոդվածի 4-րդ կետով լրացվող 7-րդ կետում «սահմանում է» բառը փոխարինել «հաստատում է» բառով:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
5.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 4-րդ հոդված	Նախատեսվում է փոփոխություն կատարել Օրենքի 9-րդ հոդվածում, ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը ուղեկցում կարող է իրականացնել միայն հատուկ վտանգավոր բեռների փոխադրման դեպքում: Մինչդեռ նշենք, որ Օրենքի 9-րդ հոդվածն ունի անցումային դրույթ. մասնավորապես 2022 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-463-Ն օրենքի ուժով ներքին գործերի նախարարության կանոնադրությունն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող չորրորդ ամսվա մեկից Օրենքի 9-րդ հոդվածն ամբողջությամբ ուժը կորցրած է ճանաչվելու եւ լրացվելու է նոր 8.2-րդ հոդված որով ներքին գործերի նախարարությանը կրկին վերապահվելու է ոչ թե հատուկ վտանգավոր բեռների այլ ցանկացած վտանգավոր բեռի ուղեկցումը: *Պայմանավորված նշված առաջարկով՝ առաջարկում ենք հոդվածների համարները համարակալել ըստ հաջորդականության:*	Ընդունվել է Հոդվածը հանվել է	Ընդունվել է
6.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 5-րդ հոդված (լրամշակված նախագծի 4-րդ հոդված)	Նախագծի 5-րդ հոդվածում «13-րդ հոդվածի 1-ին մասի» բառերը փոխարինել «13-րդ հովածի 2-րդ մասի» բառերով	Ընդունվել է Նախագիծը խմբագրվել է	Ընդունվել է

7.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 5-րդ հոդված (լրամշակված նախագծի 4-րդ հոդված)	Նախագծի 5-րդ հոդվածում «հատուկ վտանգավոր բեռներով» բառերով» բառերից հետո լրացնել «համապատասխան հոլովաձևերով բառերը:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
8.	*ՀՀ կառավարություն*	Նախագի 5-րդ հոդված (նոր լրացվող)	Նախագիծը լրացնել նոր 5-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Օրենքի 14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մաս. «3. Փոխադրողը պարտավոր է ապահովել հատուկ վտանգավոր բեռների փոխադրումն ուղեկցող անձնակազմի միջոցով:»: Օրենքում անհրաժեշտ է հստակ նշել, որ արգելվում է առանց ուղեկցող անձնակազմի հատուկ վտանգավոր բեռների փոխադրումը կամ սահմանել փոխադրողի համար պարտականություն՝ հատուկ վտանգավոր բեռների փոխադրումը միայն ուղեկցող անձնակազմի միջոցով իրականացնելու վերաբերյալ:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
9.	*ՀՀ կառավարություն*	**Նախագծի 6-րդ հոդված**	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասում «և ունենան վերապատրաստմանը» համապատասխան» բառերը փոխարինել «հանձնեն որակավորման քննություն և դրա արդյունքի հիման վրա ստանան» բառերով:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
10.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետով լրացվող 5-րդ մասում «փոխադրող կազմակերպությունը» բառերը փոխարինել «փոխադրողը» բառով, նույն մասում «և ունենա» բառերը փոխարինել «հանձնի որակավորման քննություն և դրա արդյունքների հիման վրա ստանա» բառերով:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
11.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասում «հունվարի 1-ից» բառերից հետո լրացնել «բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է

12	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասում «վեց ամսվա» բառերը փոխարինել «մեկ տարվա» բառերով:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
13.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածը լրացնել նոր՝3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «3.Վտանգավոր բեռների փոխադրումներ իրականացնող փոխադրողը պարտավոր է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում ապահովել անվտանգության մասնագետների առկայությունը և վերապատրաստումը, վարորդների մասնագիտական վերապատրաստումը:»;	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
14.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 1-ին հոդված, 2-րդ հոդված, 6-րդ հոդված	Օրենքի նախագծում հոդվածների մասերի համարակալումն անհրաժեշտ է շտկել՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթները	Ընդունվել է Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է
	ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-576՝ -02.05.2023-ՏՀ-011/1)				
1..	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 8-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության տարածքում առանց» բառերից հետո լրացնել ««Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» օրենքով» բառերով՝ Անհրաժեշտ է հստակեցնել «օրենսդրությամբ սահմանված» ձևակերպումը՝ նկատի ունենալով իրավական որոշակիության սկզբունքի պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդրությունը լայն հասկացություն է, մասնավորապես՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ օրենսդրությունն օրենսդրական և	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է

			ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ամբողջությունն է:		
	«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-576[2] -02.05.2023-ՏՀ-011/1)				
1.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով լրացվող 62-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով լրացվող 62-րդ կետում «փոխադրելու» բառը փախարինել «փոխադրող» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
	«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-576[3] -02.05.2023-ՏՀ-011/1)				
1.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 8-րդ կետ	նախագծի 1-ին հոդվածով լրացվող 8-րդ կետում «գործունեության կազմակերպում» բառերը փոխարինել «գործունեություն իրականացնելու համար» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է